ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» սեպտեմբերի 2019 թվականի N: 463-ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱԽՈՒՐՅԱՆԻ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N156-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հուլիսի 19-ի N01/07.1/13986 գրությունը,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 4-ի N515 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի մայիսի 27-ի նիստի թիվ 6 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Գայանե Իգիթյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Գրիգոր Պապոյանի, Զարիկ Մինասյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Լիպարիտ Տիգրանյանի, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Էմմա Բաբուջյանի, Ռուզան Հովհաննիսյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված Հայկարամ Դրմեյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Հովհաննես Մաթոսյանին, Ամալյա Գրիգորյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Աստղ Մաթևոսյանին, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Սիրուշ Հակոբյանին, Ռուզան Հովհաննիսյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N156-Ա որոշման հավելվածում «Իգիթյան Գայանե – Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված», «Պապոյան Գրիգոր», «Մինասյան Զարիկ», «Տիգրանյան Լիպարիտ», «Բաբուջյան Էմմա» բառերը համապատասխանաբար փոխարինել «Դրմեյան Հայկարամ - Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված», «Մաթոսյան Հովհաննես», «Գրիգորյան Ամալյա», «Մաթևոսյան Ատոմ», «Հակոբյան Սիրուշ» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է